

Chrysothrix

Chrysothrix m

Chrysothrix

891.995

Ch-26

1937

ՀԱԿՈՒ ԱԹԱԼՅԱՆ

ԱՂՎԵՄՆ ՈՒ ԱՂԱՍԻՆ



891. 995
Ա. 26

1937 թ.

ԲԱԳՈԼ.

MAY 2011

ՅՅԻ.ՅՅՄ
Կ-ՉԶ ԿԿ

ՀԱԿՈՐ ԱԹԱԼՅԱՆ

ԱՂՎԵՍՆ ՈՒ ԱՂԱՍԻՆ



ԱԶԵՐՆԵՇՐ
Բազու 1937 թ.

БИБЛИОТЕКА
Академії Н укр
УСРР

Խմբագրեց Վ. ԱՂԱՍՅԱՆ
Նկարագրեց ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

Հանձնված է արտագրության 23|||—37 թ.

Ստորագրված է տպելու 2|V—37 թ.

Տպագրութ. թերթ 1

Թղթի ձևվը 82×110 ¹/₃₂.

Գլավ. լիազոր.—№ 2907

Տիրած 1000 պատվեր 444.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

8192-53


Ազերնեշըի տպարան, զրքերի պալատ 26-ի անվան, Բագու, Ալի-Բայրամովի փ. 26.

ԱՂՎԵՄՆ ՈՒ ԱՂԱՍԻՆ

I

Մի ծեր մարդ էր Աղասին,
Տան հոգսերն ել իր ուսին.
Ապրում էր նա քրտինքով,
Իրա հալալ վաստակով:
Շատ հավ ունեւր Աղասին,
Իր կնոջ հետ միասին
պահում էին հավերին,
Իրենց «կթան կովերին»:
Թեպետ ծեր էր, բայց արի,
Աշխատասեր ու բարի,
Սակայն մի որ Աղասին,
Գերի դարձավ աղվեսին:
Լսեք հիմա պատմեմ ձեզ,
Վոնց խորամանկ մի աղվես,
Ապրում էր նա իր որում,
Անտառներում, ձորերում:
Յեւ ամեն որ, ամեն որ,
Թափառում էր սար ու ձոր.
Վորս չէր գտնում, հետ դառնում,
Հալ ու մաշ էր նա լինում:
Անց էր կացել մի ամիս,
Նա չէր կերել համեղ միս.
Վիզն ու պոչն ել բարակել,
Անտառից ցած էր յեկել,
Թագուս, առանց յերկյուղի,

Աչքը հառած մոտ գյուղին:
Ու այդ ճամբին հեռավոր,
Նա թուղթ ճարեց մի կտոր:



Ասաց,- բարի լինես թերթ,
Դու ինձ վորս տաս այսուհետ-
Բախտս բացվի մի կարգին-
Կարոտ չմնամ յես կյանքին:
Տեսավ թղթում իր գտած,
Ինչ վոր բաներ կար գրած:
— Ի՞նչ լավ բան ե,- ասում ե,
Ու ինքն իրեն՝ խոսում ե...
Յեվ դնում ե պոչի տակ,
Պահում վոնց թանգ հիշատակ...
— Դեհ, յես գնամ դեպի գյուղ-
Աղասու մոտ անյերկյուղ:

Միտքս պատմեմ մի կարգին,
Վոր նա լսի իմ խոսքին:
Ու ձևանամ շատ տխուր,
այս զիշեր ել մնամ հյուր-
Յեվ այս թղթով Աղասուն,
Խաբեմ, վանց մի անասուն:



Այսպես ասաց ազվեսը,
Թքեց քսեց յերեսը:
Մտավ գյուղը "շատ տխուր",-
Աղասուն տա մի նոր լուր...

II

— Բարո՛վ, յեղբայր Աղասի,
Խոսք եմ ասում, ինձ լսի:
Բերել եմ քեզ յես մի թերթ,-
Վոր ինձ լսես այսուհետ:

— Ինչի՞ համար լսեմ քեզ,
 Ասա խնդրեմ, այ՛ աղվես.
 Թերթ ես բերել՝ շա՛տ ապրես,
 Հես ծեծելու հո դու մեզ:
 — Բանն այդ հո չի Աղասի,
 Վերջին խոսքս դու լսի:
 Գրած է այս թղթի մեջ,
 Թե հավերիդ կգա վերջ:
 Համաճարակ պիտի գա,
 Ասում եմ քեզ յես հիմա...
 Ու մի գիշեր հավերիդ,-
 Ամբողջ թառը ավերի:



Յես յերազում տեսել եմ,
 Ականջներով լսել եմ,-
 Վոր ինձ շատ ես սիրում դու,
 Վոնց հարազատ քո վորդուն:

Չեմ մոռացել եդ բանը,
 Վոնց մհակը՝ չորանը.
 Ասել եմ գամ հայտնեմ քեզ,-
 Վոր հավերիդ ճարը տես:
 Վերջին խոսքը, վոր լսեց,
 Ծեր Աղասին արտասովեց:
 — Բա ի՞նչ անեմ այ՛ աղվես.
 Ձանս մատաղ լինի քեզ:
 Մի դեղ ճարի հավերի,-
 Վոր շեն տունս չավերի:
 — Դու հանգիստ կաց, Աղասի
 Դարդ մի արա, խաղ ասի.
 Մոտիկ, հենց իմ տանը կից
 Մի ծեր մարդ կա կարեկից,
 Բժիշկ է նա մի կարգին,
 Ամեն խոսքը՝ քա՛ր անգին:
 Նա կարող է բժշկել,
 Վողջ հավերին քո՛ փրկել:
 — Տար ազատիր, շա՛տ ապրես.
 Այ բարեկամ իմ աղվես...
 Բայց վախում եմ թե խաբես,
 Տանես, հավերս լափես...
 — Վնչ, իմ յեղբայր Աղասի,
 Հո կարոտ չեմ յես մսի,
 Վորքան կուզես, միս տամ քեզ,
 Ուտես, ուտես, ու զզվես:
 — Սխալվեցի բարեկամ,
 Ինչ վոր կուզես, քեզ կտամ.
 Միայն ասա թե ի՞նչպես,
 Իմ հավերին կփրկես:
 — Հավերդ բարձենք մի եշի,
 Առաջդ արա ու քշի.
 Տանենք հանձնենք բժշկին...+

III

Առավոտ վաղ Աղասին,
 Աղվեսի հետ միասին
 Ելը բարձած հավերով...
 Մտան անտառ... գիշերով...
 —Այ ես տունն ե հենց ետեղ,
 Ուր կգտնես ամեն դեղ.



Ու բժիշկն ել մի լավ մարդ—
 Պայման կապենք՝ մի շաբաթ:
 Դու կդառնաս դեպի տուն,
 Թեպետ դժվար... բայց արթուն
 Ցես կհսկեմ անպայման—
 Հավերդ առողջ հետ դառնան...
 —Դե քեզ մատաղ այ աղվես,
 Տնով, տեղով, շատ ապրես,
 Ենպես պահիր հավերես,
 Վոր իմ տունս հավերես:
 Այսպես ասաց Աղասին,
 Թողեց գնաց—աղվեսին:



IV

--Բա չես ասի, կնիկ յես
 Պայման դրի մի եսպես,


Վոր հավերը մեր նորից,
 եստեղ լինեն՝ յոթ որից:



Աղվեսն էլ ինձ խոստացավ,
 Նրանց պահի՛ առանց ցավ.
 Ասաց, — յեթե ուրանամ,
 Ձույզ աչքերով կուբանամ:
 Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ ե
 Եղ աղվեսը մեզ խաբել...
 Բայց, վոր խաբի, դու գիտե՞ս,
 Թե ինչ կանեմ նրան յես:
 — Ձուր ես թողել հավերին, —
 Իմ կաթնատու կովերին.
 Լափելուց հետ ի՞նչ կանես,
 Թեկուզ աշխարհ խափսնես:
 Միտք են անում մարդ ու կին,
 Նստած թախտին տխրագին:

Մինչ պայմանը լրացավ,
 Դարդից մաշվեց կոացավ...
 Ու անհամբեր Աղասին, —
 Սպասում եր աղվեսին:
 Աղվեսն էլ վճռ աղվեսն եր,
 Վոր հավ չուտեր ամիսներ...
 Բայց անցել եր մի ամիս,
 Նա չէր կերել հավի միս:
 Ելը նստած — Աղասին,
 Մի որ գտավ աղվեսին
 Տեսավ աչքերն ահա փակ
 Մի ծառի տակ մրափած...
 Ելից թռավ, իջավ ցած, —
 — Աղվես, աղվես, աչքդ բաց,
 Ասա ո՞ւր են հավերս,
 Այ, անիրավ, աներես...
 Բայց աղվեսը խորամանկ,
 Հենց վոր Աղասուն տեսավ
 Պոչը դրեց փորի տակ —
 Ու պսակ, փախավ դեպի սար:
 — Վայ, ինձ, վայ, ինձ, վայ տունս,
 Հարյուր տարվա՛ անունս...
 Բա խորամանկ աղվեսը
 Սևացնի յերեսս —
 Միտք ե անում ինքն իրան —
 Ա՛յ թե բռնի մի նրան, —
 Ընկեր, աղբեր, ուրանա,
 Ձարկի՛, սիրտը հովանա:
 Սակայն ո՞ւշ եր... աղվեսին
 Վճնց կհասներ Աղասին:
 Ու ճամբերով նա վոլոր, —
 Հետ դարձավ տուն՝ խեղճ, մոլոր...

Գյուղում արգեն իր մասին
 Ծաղր եր լսում Աղասին.
 Կինն ել գնում ու գալիս,
 Նախատում եր ու լալիս:
 — Քեզ պես մարդը չի՛նի,
 Եդ ինչ արիւր դու հիմի.
 Հափեղ տվիր հավերս
 Նորոգեցիր ցավերս:



Յեզ Աղասին ամեն որ
 Հավ եր առնում նոր ու նոր—



Ու այդ նախշուն հավերին, —
 Թան եր տալիս ծառերին:
 Բայց դե հանկարծ մի գիշեր,
 Ելի աղվեսը հիշեց. —
 Անխղճությամբ ավելի
 Յեկավ տարավ հավերին....



— Բա ես տեսակ ել կրահ,
 Են աղվեսը խորամանկ,
 Գա ու թառս ավերի,
 Տանի թմփլիկ հավերիս:
 Գանգաավում եր Աղասին,
 Գյուղի դարբին Մանասին:
 — Պատրաստիր ինձ մի թակարդ,
 Վորը լինի վողջ յերկաթ:
 Պատվիրեց ու մի շաբթից
 Թակարդն առավ յերկաթի,
 Բերեց, լարեց թառի տակ...
 Աղվեսն յեկավ անգիտակ
 Ու թակարդի մեջն ընկավ.
 Ել փախչելու ճար չկար:
 Առավոտ վաղ մարդ ու կին,
 Մոտ վազելով թակարդին,
 Յերկու հոգի միասին, —
 Նախատեցին աղվեսին:
 — Ա՛յ ավազակ, փո՛ւչ աղվես,
 Դու խաբեբան, սևերես.
 Կարծում եյիր, Աղասին
 Պիտի ժպտար յերեսիդ...
 Վոր դու թագուն, ավեն որ,
 Մութ ճամբերով հեռավոր
 Գայիր բակս մտնեյիր,
 Վողջ հավերս լափեյիր...
 Յե՛վ յերկուսով, մարդ ու կին,
 Ուժ տվեցին մահակին.
 Տո՛ւր թե կտաս, անդադար: —
 Աղվեսն յեղավ շանսատակ:
 Ահա ինչպես Աղասին,
 Գերի դարձավ աղվեսին,
 Ապա վերջում Աղասին —
 Խեղդեց անսիրտ աղվեսին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԶՄՈՒՆ ԱՅՐԱԾՔ
ՄԱ. Ա. ՏՐՈՒՄԻԱՆԻ
Ե. ՄԱՍԻՍԻԱՆԻ

БІБЛІОТЕКА
Академії Н. укр
УСРР

<< Ազգային գրադարան




NL0395544

Գրքը 30 Կ.

60/1937

175



HAQOB ATALJAN

TYLKY vƏ AQIASI

AZƏRNƏŞR
Bakı — 1937

4

6278